



Զրույցի թեմաներ Գեյվին Նյուսոմ



cta.org/campaign

#WeAreCTA
#VotePublicEd

Փոխնահանգապետի թեկնածու Գեյվին Նյուսոմը

հավասար հանրային կրթություն բոլորի համար, համայնքային հզորացում և սոցիալական արդարադատություն չենպիտան է, ինչ առաջին անգամ 1997թ-ին մտել է պետական ապարատուրա: Գեյվինը անձնվեր աջակիցն է ուսանողների և ուսուցիչների, ինչը փաստում է իր նորարարական կարիերան, և նա երբեք չի վախեցել ճիշտ վարվել ճիշտ պահին՝ ճշմարիտ պատճառներից ելնելով: Որպես մեր հաջորդ նահանգապետ, նրա տեսլականը կօգնի Կալիֆորնիային բարգավաճել:



Ուսուցիչների ընտրությունը

ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ՀԱՄԱՐ. ՃԻՇՏ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՃԻՇՏ ՊԱՀԻՆ:

- Նյուսոմը կարծում է, որ Կալիֆորնիայի հանրային կրթության խնդիրների լուծումը սկսվում է ուսուցիչներից: Նա կարծում է, որ մենք պետք է գրավենք բարձրակարգ ուսուցիչներին և պահենք նրանց՝ նրանց վերաբերվելով և վճարելով որպես պրոֆեսիոնալներ: Որպես Սան Ֆրանցիսկոյի քաղաքապետ, Նյուսոմը հիմնել է դժվար կացության հայտնվելու դեպքերի համար ֆոնդ, որը կանխարգելում էր ուսուցիչ պաշտոնաթողությունը տնտեսական անկման և նահանգային բյուջեի կրճատումների ընթացքում:
- Նյուսոմը կարծում է, որ կրթական գերազանցությունը չի ընկալվում Մակրամենտոյում, սակայն ավելի շուտ այն արտացոլվում է հարյուր հազարավոր ուսուցիչների, ծնողների և ուսանողների ամենօրյա քրտնաջան աշխատանքի արդյունքում: Եվ նա հոգնել է այն մարդկանցից, ովքեր բիծ են նետում ուսուցիչների վրա, երբ նրանք իսկապես ամենօրյա հերոսներ են, ովքեր իրենց երազանքը նվիրել են՝ օգնելու բոլոր ուսանողներին, հասնել իրենց սեփական երազանքին:
- Նյուսոմը աջակցում է ավելի շատ ամբողջական ծառայություններ ապահովող համայնքային, հանրային դպրոցների ստեղծմանը, որոնք կունենան առողջապահական կենտրոններ, արվեստի կրթություն, համակարգչային գիտության կրթություն և հետ դպրոցական ծրագրեր: Որպես Սան Ֆրանցիսկոյի քաղաքապետ, Նյուսոմը օգտագործում էր քաղաքային ռեսուրսները՝ օգնելու տեղական դպրոցներին ծառայել որպես համայնքային կենտրոններ:
- Նյուսոմը հավատում է, որ լավ կրթությունը հաջողության և լավ կյանքի բանալին է: Նա դեմ էր քոլեջի վարձավճարներին և աջակցում էր երկամյա անվճար համայնքային քոլեջի կրթությանը՝ նվազեցնելու ուսանողների պարտքերը և ստեղծելու ավելի լավ ուղիներ որակյալ աշխատանքների համար:
- Ինչպես ուսուցիչները, Նյուսոմը դեմ է հանրային կրթության մասնավորեցմանը: Նա դեմ է մասնավոր դպրոցների տարածմանը, հատկապես այն մասնավոր դպրոցների, որոնք կառավարվում են մասնավոր ընկերությունների կողմից և ուզում են օգուտ քաղել մեր երեխաներից: Նա կողմ է պահպանել մասնավոր դպրոցները նույն հաշվետվողականության և թափանցիկության ստանդարտներով ինչպիսիք առկա են հանրային դպրոցներում: Նյուսոմը ակնատես է եղել մի քանի մասնավոր դպրոցի օպերատորի կողմից վատնումների և չարաշահումների և հանձն է առել այն դադարեցնել: Նա կարծում է, որ բոլոր մասնավոր դպրոցները պետք է հավասար մատչելի լինեն ԲՈՒՈՐ ուսանողների համար և մասնավոր դպրոցների թույլատրելու որոշումները պետք է կատարվեն տեղական դպրոցական խորհուրդների կողմից:
- Նյուսոմի առաջնահերթություններն են՝ կրթությունը և ավելացված մատչելի հասանելիություն որակյալ դպրոցներին բոլոր մակարդակներում, տնտեսական զարգացում, աշխատատեղերի ստեղծում, աղքատության նվազեցում, շրջակա միջավայրի պաշտպանություն և սոցիալական արդարադատություն: Նա կապահովի, որ Կալիֆորնիան շարունակի առաջնորդվել նորարարական և խիզախ գաղափարների օրինակով: